ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2025 թվականի N 1299-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 702-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի ռեժիմ սահմանելու մասին» N 702-Ն որոշման՝

1) N 1 հավելվածի 1-ին, 2-րդ և N 2 հավելվածի 2-րդ կետերում «սահմանային նշան» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «սահմանանշան» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով.

2) N 1 հավելվածում՝

ա. 2-րդ կետում «(պլաստիկ)» բառը փոխարինել «կամ պլաստիկ» բառերով,

բ. 4-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը «սահմանագծից» բառից հետո լրացնել «դեպի Հայաստանի Հանրապետության տարածքի խորքը» բառերով,

գ. 4-րդ կետի 5-րդ ենթակետում «նշանները» բառը փոխարինել «սահմանա-նշանները» բառով.

3) N 2 հավելվածում՝

ա. 10-րդ կետում «նշանի» բառը փոխարինել «սահմանանշանի» բառով,

բ. 13-րդ կետը «կառուցվել» բառից հետո լրացնել «և շահագործվել» բառերով.

4) N 3 հավելվածում՝

ա. 6-րդ կետի 2-րդ պարբերությունում «42 x 25» թվերը փոխարինել «38 x24» թվերով, իսկ 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ամսաթիվ-կնիքի վրա հայերենով և անգլերենով նշվում են «ՀԱՅԱՍՏԱՆ», «ARMENIA» բառերը, պետական սահմանի անցման կետի անվանումը, պետական սահմանը հատելու օրը, ամիսը և տարեթիվը, ստուգիչ թիվը, ելքի կամ մուտքի նշանը, ամսաթիվ-կնիքի համարը, ինչպես նաև պատկերված են համապատասխանաբար՝ օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային անցման կետերի տարբերանշանները:»,

բ. NN 1, 2 և 3 ձևերը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի նոյեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ